

ԼԵՆԴՐՈՒՐ ԱԼՈՅԱՆ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՇԻՐՎԱՆԶԱԴԵՆ՝ «ՄՇԱԿԻ» ԱՇԽԱՏԱԿԻՑ

[ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ]

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԼԵՆԴՐՈՒԾ ԱԼՈՅԱՆ

Ալեքսանդր Շիրվանզադեն՝ «Մշակի» աշխատակից

Երևան
ԵՊՀ հրատարակչություն
2016

ՀՏԴ 821.19.0
ԳՄԴ 83.3(5Հ)
Ա 327

Տպագրության է երաշխավորել
ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի
մամուլի պատմության և տեսության ամբիոնը

Խմբագիր՝ Դ. Վ. Պետրոսյան, բ.գ.դ., պրոֆեսոր

Լ. Ա. Ալոյան
Ա 327 **Ալեքսանդր Շիրվանզադեն՝ «Մշակի» աշխատակից**/ Լ. Ա. Ալոյան: -Եր., ԵՊՀ հրատ., 2016, 48 էջ:

Գրքույկում հեղինակն ի մի է բերել անվանի գրող, հրապարակախոս Ալ. Շիրվանզադեի՝ «Մշակում» հրատարակած հոդվածները, որոնք առընչվում են 20-րդ դարասկզբի հայ մշակութային կյանքի մի շարք խնդիրների:

ՀՏԴ 821.19.0
ԳՄԴ 83.3(5Հ)

ISBN 978-5-8084-2150-9

© ԵՊՀ հրատ., 2016
© Լ. Ա. Ալոյան, 2016

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

1913-ի հոկտեմբերի 20-ին՝ Ռաֆֆու մահվան 25-ամյակի կապակցությամբ կազմակերպված միջոցառման ժամանակ մեծ գրողի գերեզմանին ճառ արտասանելիս, հանկարծամահ եղավ «Մշակ» թերթի խմբագիր Ալեքսանդր Քալանթարը: Օրեր անց խմբագիր դարձավ Համբարձում Առաքելյանը, ով իր առաջին խմբագրականում խոստացավ հրապարակել սահմանադիր-ռամկավարական կուսակցությանը չպատկանող բոլոր գործիչների հոդվածներն առանց կրճատումների և դիտողությունների, պայմանով միայն, որ վերջում նշվելու է՝ խմբագրությունը համաձայն չէ նրանց հայտնած ինչ-ինչ կարծիքների հետ: Այս իրողությունը պատճառ դարձավ, որ «Մշակի» աշխատակիցներ դառնան Ալ. Շիրվանզադեն, Վ. Տերյանը, մի շարք հեղինակավոր այլ գործիչներ:

19-րդ դարասկզբի և 20-րդ դարավերջի հայ գրականության երևելի դեմքերից մեկի՝ Ալեքսանդր Շիրվանզադեի հրապարակախոսական վաստակի բացահայտման և արժևորման փորձ է Ժուռնալիստիկայի ֆակուլտետի հոգելույս պրոֆեսոր, բ. գ. դ. Լենդրուշ Ալոյանի հեղինակած գրքույկը: Ցավ ի սիրտ, հեղինակը չհասցրեց այն հրատարակված տեսնել: Լ. Ալոյանի դիտարկումները ամփոփված են «Մշակ»-ում լույս տեսած հոդվածների այն ընտրանիով, որը յուրովի է ամբողջացնում գրող-հրապարակախոս Շիրվանզադեի դիմանկարը:

Նաղաշ Մարտիրոսյան, բ.գ.թ., դոցենտ

ՇԻՐՎԱՆԶԱԴԵԻ ԹԱՏԵՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Մշակում» տպագրված հենց առաջին հոդվածը, որը Շիրվանզադեն վերնագրել էր «Ֆաուստը հայ բեմի վրա», բանավեճի առիթ դարձավ: Նա գեղեցիկ մտահղացում է համարում համաշխարհային գրականության նշանավոր գործերը հայ հանդիսատեսին ներկայացնել այն դեպքում, երբ ոչ միայն հանճարներն են կարծես չքացել, այլ խոշոր տաղանդների փոխարեն ասպարեզ են եկել մտավոր միջակությունները: Նրա կարծիքով Գյոթեն, իհարկե, Շեքսպիր չէ իր հանճարի մեծությամբ, և սխալ են նրանք, ովքեր Գյոթեի անունը դնում են գեղարվեստական գրականության արքայի կողքին: Որ «Ֆաուստը» Գյոթեի նշանավոր գործերից է, անառարկելի փաստ է, սակայն, ըստ Շիրվանզադեի, սա Հոմերոսի, Շեքսպիրի ազդեցությամբ գրված գործ է: Նա գրում է. «Ես Գյոթեի այս գործի մեջ երբեք չեմ գտել այն, ինչ գտնում են նրա երկրպագուները, ավելի ճիշտ՝ չեմ զգում: Իսկ մի բան որ չես զգում, հանցանք է ասել թե զգում ես»[1]: Ըստ Շիրվանզադեի՝ այս գործում մի տեսակ սառնություն կա, որը գրված է ֆրանսիական հիանալի գրականության ազդեցությունից հեռանալուց հետո: Շիրվանզադեն գտնում է, թե տեսարաններ կան, որոնք ոչ մի կապ չունեն երկի բովանդակության հետ: Օրինակ է բերում թագավորի և իր նախարարների երկար ու բարակ դատողությունները, գործի մեջ միևնույն միտքը կրկնվում է մի քանի անգամ և այն դարձնում ձանձրալի ու քնաբեր: Իսկ այս գործն ընդունվել է ժողովրդի կողմից, որովհետև դրանից մի կես դար առաջ Շարլ Ֆրանսոա Գունոն այն վերածել է օպերայի, որն էլ սկսեց հռչակվել հիանալի երաժշտության շնորհիվ:

---

[1] «Մշակ», 1913, N 249:

Նա դեմ չէ ռեժիսոր Սևումյանի նախաձեռնությանը՝ Մոսկվայի բեմում Կոմիսարժևսկայային կրկնելու կամ ընդօրինակելու ցանկությանը, սակայն ինչ-որ տեսել է Թիֆլիսի Արտիստական թատրոնում, միապաղաղ էր ու ձանձրալի: Դերասաններից հաջող էին տիկին Հասմիկը Մարթայի դերում, Մամիկոնյանը Զաբելի դերում և Մամիկոնյանը Վագների դերում: «Եվ ինչքան էլ որ լավ էին խմբային տեսարանները, անկշտամբելի էին դերասան-դերասանուհիները, բայց «Ֆաուստը» որպես ներկայացում ձանձրալի էր»:

Հոդվածը քննադատության ենթարկվեց բազմաթիվ երկրպագուների կողմից, ահա ինչու Վահան Տերյանը «Մշակի» 1914-ի փետրվարյան համարում հայտարարեց, թե «յուրաքանչյուր անհատ, իսկ մասնավորապես Շիրվանզադեն իրավունք ունի իր սեփական կարծիքը հայտնելու…»:

«Հայ թատրոնի մասին» հոդվածաշարում նա խոսում է Թիֆլիսի հայ դրամատիկական խմբի ռեժիսոր Սևումյանի մասին, որի ընդարձակ զեկուցումը շատ էր դուր եկել Շիրվանզադեին: Սա, ըստ հոդվածագրի, հայ թատրոնի մասին բարեկամաբար խորհող մի մարդու գործ էր, որտեղ կային լրագրությունից ոչ զուրկ խորհրդածություններ, որոնք անուշադիր թողնել չէր կարելի: Կային նաև առաջարկություններ, որոնց մասին մտածելը ճիշտ ժամանակին էր: Իսկ առաջարկն էր՝ հրավիրել հայ թատերական գործիչների համագումար: Շիրվանզադեն սա պարապ գործ է համարում՝ գրելով. «Համագումարը կարող է իմաստ ունենալ այն ազգերի մեջ, որոնք ունեն բեմական գործիչների բավարար բազմություն և գործող մարմիններ: Իսկ ի՞նչ ունենք մենք: Չեմ ասում գավառներում, այլ նույնիսկ մեր երկու մտավոր կենտրոններում՝ Թիֆլիսում և Բաքվում»[2]: Նա գովաբանում է Սևումյանի ցանկությունը՝ օտարներից վերցնել գեղեցիկ օրինակներ և ներառել այն հայության մեջ: Ռուսական թատրոնը հրաշքներ է գործում, իսկ հայկականը միայն կաղում է:

[2] «Մշակ», 1913., N 274, 275, 276:

Շիրվանզադեն առաջնային է համարում սեփական թատրոն ունենալը, որից էլ սկսվելու են հայ թատրոնի դրական ռեֆորմները: Նաև առարկում է Սևումյանին մի հարցում, թե դրամն այնքան էլ նշանակություն չունի հայ թատրոնի զարգացման համար. «Ասել, թե տվեք լավ թատրոն և նյութական ապահովությունը ինքնըստինքյան կգա, կնշանակի ծաղրել գործը: Առաջ ապահովություն, հետո միայն լավ թատրոն՝ ահա ուղիղ ճանապարհը»: Նա չի մոռանում նաև լավ ռեպերտուարի հարցը. «Կերակրել հայ թատրոնը միայն թարգմանականով, կնշանակի ենթարկել նրան հյուծախտ ստանալու և մահացման վտանգին: Չկա աշխարհիս երեսին մի ազգ, որի թատրոնը թարգմանական պիեսներով ապրելու ցնորք կունենա: Ծախսեցեք թեկուզ միլիոններ, ունեցեք թեկուզ տասնյակ հանճարեղ դերասան-դերասանուհիներ, չեք փրկի թատրոնը, եթե չունեք ինքնուրույն պիեսներ»:

Նա ցավով պնդում է, որ եվրոպական բոլոր ազգերի մեջ առաջին սեփականն է՝ մայրենին, ապա նոր օտարինը, թեկուզ սեփականը հազար անգամ վատ լինի օտարինից: Իսկ մեզանում ընդհակառակն է. օտարի ոչնչությունն անգամ բարձր է սեփական արժանավորից: Նա օրինակներ է բերում իր պիեսների բեմադրությունից, երբ արձագանքում էին. «Սյուժետը հնամաշ է…, վերին աստիճանի ձանձրալի է գրվածքը: Հեղինակը գաղափար անգամ չունի բեմի մասին»: Ուրեմն, ըստ Շիրվանզադեի, կուսակցական հաշիվներից, անձնական կրքերից, սև նախանձից բաղկացած մի այսպիսի մթնոլորտում տաղանդներ ծնվել և մանավանդ ապրել չեն կարող: Նա բերում է դերասան Աբելյանի օրինակը, երբ Թեհրանում ցնցվում էին նրա խաղից, երբ նրան ծափահարում էին օտարերկրյա դերասանները, հայերը հաճախ սուլում էին, խանգարում հայ տաղանդին: Եվ եզրակացությունը. «Ոչ, մթնոլորտը շատ է անմաքուր, շատ է հեղձուցիչ: Հները մի կերպ դիմացել և դիմանում են այս սպանիչ մթնոլորտում, բայց նորերի, երիտասարդ ուժերի համար նա միանգամայն կործա-

նիչ է: Ոչնչացրեք այդ մթնոլորտը, եթե կարող եք, այնուհետև միայն ունեք իրավունք պահանջելու թատրոնի վերածնունդ»:

Հայկական թատրոնին է նվիրված նաև 1916-ի «Միացեք և գործը փրկեք» հոդվածը[3]: Մտահոգության առարկան դերասանների հարցն է: Մոտենում էր աշունը, սկսվելու էր նոր թատերաշրջանը, բայց նրանք հնարավորություն կունենան թատերաշրջանը բացելու, թե ոչ, մնում էր հարցերի հարցը, որը նաև նրանց առօրյա ապրուստին էր վերաբերում: Ըստ Շիրվանզադեի՝ սրա պատասխանը կախված է հենց դերասաններից: Նրանք պիտի մի կողմ թողնեն փոխադարձ գժտությունները, մանր-մունր ինտրիգները, հանուն եթե ոչ թատրոնի, այլ գեթ իրենց անձնական շահերի: Շիրվանզադեն կարծում է, որ կողմնակի մարդկանց այս գործին խառնվելը, բացի վնասից, ոչինչ չի տալիս: Եվ դրա փայլուն օրինակը նա համարում է Հայ դրամատիկական ընկերությունը, որը «Միանգամայն ավելորդ մարմնի կատարյալ բարոյական ապիկարությունն է թատերական գործը վարելու վերաբերմամբ: Ասում եմ կատարյալ ավելորդ, սակայն նա ավելորդ չէր լինի, եթե ընդունակ լիներ գործ կատարելու: Դժբախտաբար նա իր անհամապատասխան կազմի շնորհիվ, թե մի ուրիշ պատճառով, ընդունակ չգտնվեց: Նրանց պահանջը միայն անձեռնմխելի ֆոնդից ծախսերի համար գումարներ պահանջելն է, բայց որը նրանց չի թույլատրվում: Ահա ինչու նրանք նորից հույսը դրել են Մանթաշյանների նման մարդկանց նվիրատվությունների վրա: Ուրեմն ոչ թե Դրամատիկական Ընկերության վրա պիտի հույս դնել ,այլ ձեռք-ձեռքի տալ, միանալ և փրկել հայրենանվեր գործը»:

[3] «Մշակ» , 1916 , N 130:

ՆԱՄԱԿՆԵՐ ՄՈՍԿՎԱՅԻՑ

1914-ին Շիրվանզադեն գործուղվել էր Մոսկվա, որտեղից թերթի խմբագրություն ուղարկեց հոդվածների մի շարք, որոնք տպագրվեցին «Մշակի» N12-ից սկսած մինչև N40-ը: Նա ջերմ հարաբերություններ էր հաստատել բանաստեղծ Ալեքսանդր Ճատուրյանի հետ և նրա աջակցությամբ էլ ի մոտո ծանոթանում էր ռուսահայության կյանքին: Առաջին այցելությունն Ազատ թատրոնն էր՝ նորաբաց մի հաստատություն, ուր խաղացվում էր անգլիացի կամ ամերիկացի մի հեղինակի տարօրինակ վերնագրով՝ «Желтая кофта» պիեսը: Սա կես օպերետ էր, կես դրամա, ուներ որոշակի հետաքրքրություն: Այստեղ էլ ծանոթացել է նաև Մաքսիմ Գորկու կնոջը՝ Անդրեևային, որը նույնպես եկել էր բարեգործական այդ երեկոյին, որի ընթացքում հանդիսատեսները չէին վարանում օգնության ձեռք մեկնել և գանձարկղ գցել որոշակի գումարներ՝ ծեր դերասաններին օգնելու նպատակով:

Ճատուրյանն այնուհետև Շիրվանզադեին ծանոթացրել է Մարտիրոս Սարյանի հետ: Շիրվանզադեն այցելել է Սարյանի արվեստանոց, նրան նորահայտ տաղանդ անվանել: Նա գրում է. «Սարյանն ունի վրձնի համարձակություն, գույների նորություն, այուժենների եթե ոչ կատարյալ ինքնուրույնություն, գոնե հայ նկարիչների համար նորություն»: Շիրվանզադեն Սարյանին որակում է որպես մոդեռնիստի, բայց ոչ կույր հետևող անցողիկ դպրոցին:

Ռուսական մամուլում քննարկվում էր ֆուտուրիզմի թեման: Ահա ինչու Մոսկվա էր ժամանել ֆուտուրիզմի գրական-գեղարվեստական դպրոցի հիմնադիր, իտալացի Մարինետտին՝ պրոպագանդելու իր ուսմունքը: Եվ որովհետև այն եվրոպական է, ուրեմն պիտի հետևել դրան: «Հայ նորագույն գրականություն, որն անբան, անարյուն է,

այս ուղղությունը դեռևս մուտք չի գործել, բայց հավատացած եմ, որ պիտի մուտք գործի, քանի որ Եվրոպան արեգակ է, Ռուսաստանը՝ նրա լույսն անդրադարձնող լուսին, իսկ մենք՝ ռուսաստանահայերս, այդ երկրորդական լույսի տակ կուրորեն դեգերողներ, որ պատրաստ ենք ամեն մի լուսատտիկի գունատ փայլը ջերմ արեգակի տեղ ընդունել և երկրպագել նրան»: Իտալացին դեմ է անցյալի արժեքները գնահատողներին, իսկ պատերազմն, ըստ նրա, աշխարհի միակ առողջապահությունն է: Այսինքն՝ պիտի սիրել նորը, անսպասելին և ատել բոլորը, ինչ-որ հին է և հայտնի: Մարդը, ըստ Շիրվանզադեի, կարող է ապշել սրանց ռեկլամներից:

Նա այցելել է նաև Սերովի և Քոինջի ցուցահանդես և մեծ տպավորություններ ստացել: Նրանցից մեկը պորտրետիստ էր, մյուսը՝ պեյզաժիստ: Երկուսն էլ իրենց մահկանացուն կնքել են, բայց անմահացել Ռուսաստանի սրտում: Շիրվանզադեն հիացած է Սերովի կտավներով, որոնք կենդանի են, հյութալի, ռեալիստական, որոնք կարող են լինել միայն կյանքով ոգևորվող ստեղծագործողի գործեր: Իրենց պարզությամբ և ռեալականությամբ բարձր գեղարվեստական են, ինչպես Դոստոևսկու, Տոլստոյի, Տուրգենևի տիպերն են: Ահա ինչու Շիրվանզադեն նրան դասում է Բրիլյովի, Վերեսագինի, Ռեպինի շարքը: Նա նկարել էր նաև մի հայուհու պատկեր, որը գնորդների հսկայական խումբ էր հավաքել, և մեծ գումարներ էին առաջարկում նկարի համար, սակայն բնորդուհին հրաժարվեց այն վաճառքի հանել, ինչքան էլ որ թանկ վճարեին:

Բնական է, որ «Մշակի» ընթերցողները մեծ հափշտակությամբ էին ընթերցում Շիրվանզադեի հոդվածաշարը:

ՇԻՐՎԱՆԶԱԴԵՆ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՄԱՍԻՆ

Սկսվել էր առաջին համաշխարհային պատերազմը և ողջ հայ մտավորականության բաղձանքն էր, որ Ռուսաստանը պատերազմ հայտարարի Թուրքիային, որը հնարավորություն կտար Արևմտահայաստանին ազատագրվելու թուրքական լծից: Այս իրողությունը «Մշակ» լրագրի ուշադրության կենտրոնում էր: Թերթի 1914-ի մի շարք համարներում Սոֆիա Դանիել-Բեկը, Համբ. Առաքելյանը, Շիրվանզադեն մեջ են բերում «Баку» լրագրի խմբագիր Վերմիշևի կոչը՝ միաբանվել ողջ ազգով: Նրանք գրում են. «Հայեր, այդ ու՞ր եք գնում, այդ ինչ եք անում, սթափվեցեք, մի գնացեք դեպի բարոյական անկում, թողեք ձեր անձնական կուսակցական հաշիվները, միացեք հոգով, ձեռք ձեռքի տվեք, մոռացեք ձեր անձնական ատելությունները, միացեք հանուն հայրենիքի սիրո»:

Այս օրերին է «Մշակի» էջերում տպագրվել Շիրվանզադեի «Հերոսի վերադարձը», «Նամակ» պատմվածքները, որոնք վերաբերում էին կամավորների հերոսական գործունեությանը: Համբ. Առաքելյանը 1917-ի N227-ում խոսում է Շիրվանզադեի «Արհավիրքի օրերին» նոր դրամայի մասին, որը բեմադրվում էր Արտիստական թատրոնում: Ըստ գրախոսի, քանի որ պիեսը շատ հաջողված է և մնայուն տեղ է ունենալու հայ թատրոնի խաղացանկում, ավելի նպատակահարմար է, որ շատ մասնագետներ իրենց կարծիքն արտահայտեն պիեսի մասին, իսկ փոքրիկ թերություններն ու բացթողումները շտկվեն:

1915-ը մահաբեր էր հայ ժողովրդի համար: Օգտվելով հարմար պահից, երբ ընթանում էր Առաջին համաշխարհային պատերազմը, և բոլոր ազգերը զբաղված էին սեփական քաղաքական-տնտեսական

հարցերով, երիտթուրքերը ձեռնարկեցին նախապես պլանավորած գործը՝ ջնջել հայ ազգին:

Արդեն ապրիլի 26-ին հայտնում են, թե Վանի հայերն ընտանիքներով ապաստան են գտել ամերիկյան միսիայում, որին, սակայն, նույնպես վտանգ է սպասվում: Հայերը հերոսաբար պաշտպանվում են՝ դրսից օգնություն սպասելով: Թուրք Ջավիդ փաշան անընդհատ ռմբակոծում է քաղաքը, որը բոլոր կողմերից պաշարված է քրդական հրոսակախմբերով: Քաղաքի շրջակա գյուղերը գլխովին սրի են քաշված: Միջոցներ են անհրաժեշտ պաշարվածներին փրկելու, որոնց համար վերահաս է և վճռական ճակատագրական րոպեն: Իշխանը սպանված է, Վռամյանն՝ աքսորված:

Շիրվանզադեն անդրադառնում է նաև Կիլիկիայի հարցին: «Թույնը կուտակվում է» հոդվածում նա հայտնում է, թե Կիլիկիան այլևս գոյություն չունի: Երբևէ հայաբնակ երկիրն ամայանում է: Թուրքիան գործադրում է իր դժոխային ծրագիրը: Հայ տղամարդկանց քշում են Ասիայի խորքերը և ճանապարհին կոտորում, հայ կանանց ու աղջիկներին ցրում փաշաների հարեմները, բաժանում սպաներին, զինվորներին, եթե երիտասարդ են, եթե ծեր են, հավաքում են եկեղեցիների մեջ և այրում: Եվ եթե հայերը միայն ենթարկըվում են, սերբերը, չերնոգորցիները, բելգիացիները լարում են իրենց բոլոր ուժերը, զոհաբերում են ամեն ինչ, որպեսզի եթե չկարողանան իրենց փրկել, գոնե պատվով մեռնեն: «Հայը սովորեց զոհաբերել իր կյանքը պատվի համար, բայց չսովորեց զոհաբերել իր դրամը պատվի համար: Ահա այստեղ է մեր ամենամեծ թշվառությունը, մեր բարոյական ամենախոշոր արատը: Ահա ինչու են մեր մասին ասում՝ հայը ազգային պատվասիրություն չունի: Եթե մայրաքաղաքում ապրող ռուս հասարակության լավագույն ներկայացուցիչների հետ շնչող, արտասահմանյան կրթություն ունեցող և խելոք համարված մի հայ միլիոնատեր չի ամաչում իր թշվառ հայրենիքի երեսին շպրտել իր կարողության հազիվ մեկ հազարերորդ մասը, ազգային թշվառության օրերին, եթե Թիֆլիսի առաջնակարգ փողոցներում պալատներ

կառուցող մի ուրիշ միլիոնատեր հայ կամավորների արյունը գնահատում է իր կարողության մեկ հազարերորդականով և չեն ամաչում այնուհետև երևալ օտարներին, էլ ինչ ազդեցության մասին է խոսքը[4]»:

«Կամ գործ, կամ լռություն» հոդվածում հայության վիճակը նա սարսափելի է համարում, վաղվա օրը՝ բացառիկ վտանգի տակ: Բայց նաև հայտարարում է, թե արցունքն ու հառաչանքը չէ, որ պիտի փրկեն մեզ կործանումից: Եվ ո՞վ կարող է կռահել, թե ինչ է մեզ սպասում վաղը և ինչու՞ միայն վատն ու վատթարագույնը գուշակել: «Այլ է հոռետեսությունն ու զգուշությունը,- գրում է նա,- այլ է երկյուղն ու հուսահատությունը և չկա ավելի կորստաբեր ախտ, քան հոռետեսությունը: Սառնասրտությունն է, որ հաճախ փրկում է անհատներին ու ազգերին: Հեռու լալկանությունից: Նրա տեղը մեռելների աշխարհն է: Արցունքը թույն է, որ քայքայում է հոգին և մերկացնում սիրտը: Դա նշան է ոչ միայն երկչոտության, այլ տխմարության»[5]: Նա վատ է համարում այն մորը, որ արցունքներով է ճանապարհ դնում իր զավակին կռվի դաշտ, սա թուլացնում է նրա ուժերը, բայց տխուր է, երբ լալիս են ոչ միայն ծերերը, այլ նաև երիտասարդները, այն երիտասարդները, որոնք կարող էին շատ բան անել, բայց չեն անում: Շիրվանզադեն սա ավելի սարսափելի է համարում, քան արտաքին թշնամին: «Մի հիվանդոտ մարմին, որ սպառնում է վարակել իր ախտով մեր ժողովրդին: Եվ ընդհակառակը, որքան հաճելի է տեսնել հայ զինվորի զվարթ ու ժպտուն դեմքը, լսել նրա կրակոտ ու հայրենասիրական երգը, նույնքան ատելի է նայել այդ լալկանների թթված կերպարանքին և լսել նրանց գերեզմանային հառաչանքները: Ուրեմն՝ կամ գործ, կամ լռություն՝ ահա ինչ պիտի պահանջել այդ մարդկանցից»:

Շիրվանզադեի մտատանջության առարկան հայ քաղաքական գործիչների պակասն էր: «Չէ՞ որ վիրավորական է» հոդվածում նա

---

[4] «Մշակ», 1915թ., N 156:
[5] «Մշակ»,1918թ., N 29:

գրում է. «Մենք չունենք մարդիկ, որոնց մտավոր ուժին, հեռատեսությանը և դիպլոմատիկական տակտին կարողանայինք հանձնել մեր ճակատագիրն անվերապահ հավատով ու հույսով: Չունենք մեր ազգային վշտերի ու իղձերի կատարյալ թարգմաններ օտարների առջև: Եվ այս փաստը շոշափելի է դարձել այս պատերազմի առաջին օրերից: Մարդկանց էր վստահվել մեր գործերը վարելու, որոնք զուրկ են կենսափորձից, չունեն մտավոր պատրաստվածություն գոնե աղվես Վորոնցով-Դաշկովի մոտ մեր գործը ճիշտ վարելու, որոնց մոտ պակասում էր տակտը, քաղաքագիտական տաղանդը»[6]: Ըստ Շիրվանզադեի՝ մեկն իբրև հոգևորական, մյուսն իբրև փաստաբան, երրորդը իբրև քաղաքագլուխ, սովորական կյանքի համար շատ պիտանի, շատ օգտակար ուժեր, բայց միայն այդքանը և ոչ ավելին: Նա նույնիսկ ռուսական պետական դումայում չի տեսնում հայ արժանավորների, բացառությամբ մեկ-երկուսի, իսկ մնացածների անունները ոչ ոք չգիտի, որովհետև նրանք միայն պապանձված ներկայացուցիչներ են: Եվ եզրակացությունը. «Մի՞թե սա վիրավորական չէ մի ժողովրդի համար, որ ուրիշ ասպարեզներում տվել է այնքան տաղանդավոր և ընդունակ մարդիկ, իսկ միջակությունների գոյությունը վիրավորական է հայ ազգի համար»:

Շիրվանզադեն ցավալի է համարում, որ մենք ստեղծում ենք հեռանկարներ մեզ համար, որ չունեն իրականանալու ոչ մի տվյալ: Մենք պարտված ենք, բայց մեր լեզուն երկար է, ձայնը՝ սպառնալից: Նա անտրամաբանական է համարում, որ այս վիճակում անգամ մենք բանակռիվ ենք վարում վրացիների հետ, այնինչ ճիշտ ժամանակն է ձեռք ձեռքի տալու: Նա համաձայն չէ, որ այս խնդիրները պատասխանատու այս շրջանում շոշափում են մարդիկ, որոնք չունեն պատասխանատվության պարտականություն և ոչ էլ այնքան մեծ հռչակ, որ թույլ տար նրանց ասպարեզ ելնելու: Նրանք այդ իրավունքը չունեն:

---

[6] «Մշակ», 1918թ., N55:

1920-ին հայության դրությունն ավելի տագնապալի էր դառնում: Կայուն չէր ռազմական կացությունը, այնինչ մեզ հարկավոր էր պաշտպանել մեր անկախությունը ինչ գնով էլ որ լիներ: Իսկ թուրքերն ու ռուսները պահանջում էին մեզ դառնալ անզեն ու անպաշտպան մի հոտ: Զենքից հրաժարվելու դեպքում էլ նա մեզ հետ վարվելու էր մոնղոլական ձևով, այսինքն՝ մեզ սրբելու էր երկրի երեսից: «Մենք այլևս ոչ մի հիմք չունենք մտածելու,- գրում է Շիրվանզադեն,- թե Անտանտ անունը կրող Եվրոպան մեզ օգնություն է ցուցաբերելու: Սրանցից օգնություն սպասելը աբսուրդ է: Անգլիայի ներկայացուցիչ Ստոկսը դեռ Կարսի անկման օրը հայտարարեց, թե հայերին ոչ մի օգնություն չի տրվելու, իսկ Ավետիս Ահարոնյանը, նստած Սենա գետի ափին, սպասում է, թե երբ են հայերը հաղթելու Քեմալին: Ախր հենց Անտանտն է Քեմալին բոլշևիկների դեմ ուղարկում, իսկ վհուկ Լենինը համաշխարհային հեղափոխություն է ուզում կատարել Քեմալի օգնությամբ»: Զարմանալի էր, բայց փաստ, որ Անգլիան վերջին 40 տարիներին ավելի վատ էր վարվել հայերի հետ, քան թուրքերը: Եվ այժմ միայն ռուսն է որոշել կանխել հայ-թուրքական բախումը: Ուրեմն, ըստ Շիրվանզադեի, մենք պարտավոր ենք բարի հարևանություն անել նրա հետ, այսինքն՝ Սովետական Ռուսաստանի: «Մեր ազգի փրկության համար,- գրում է Շիրվանզադեն,- մեր պետական շահերի համար մենք պիտի սովորենք մեզ ձեռնտու կոմպրոմիսների գնալ ուր և ինչպես կարելի լինի: Չասենք թե ի՞նչ կասեն մեր մասին կեղծավորներն ու փարիսեցիները: Անենք այն, ինչ պարտավորեցնում է մեզ մեր դրությունը»[7]:

[7] «Մշակ», 1920թ., N138:

ՀՈԴՎԱԾՆԵՐ

ՏԻՏԱՆՆԵՐ ԵՎ ՊԻԳՄԵՅՆԵՐ

Գերմանական ժամանակակից քաղաքականություն, հրեշավոր միլիտարիզմի հարազատ ծնունդ: Տեսեք որպիսի մտավոր և բարոյական այլանդակություններ է տվել նա աշխարհին:

Եթե դուք քիչ թե շատ ծանոթ եք համաշխարհային թատերական գրականությանը, անշուշտ լսած եք, որ կա մի գերմանացի, թե ավստրիացի թատերագիր, որի անունն է Արթուր Շնիցլեր:

Նա մի համամարդկային հանճար չէ և ոչ այնքան օրիգինալ, որ գրականության պատմության մեջ մի դարաշրջան կազմեր: Նա սոսկ մի տաղանդ է, որի նմանը տասնյակներ ունեն ֆրանսիացիք: Այսպես թե այնպես, նա կարողացել է գրավել ռուս թատրոնի բարեհաճ ուշադրությունը: Մեր աննման կապկության շնորհիվ նա անցել է նույնիսկ հայ բեմը:

Նորերս այդ փքուն մեծությունը նույնպես արտահայտվել է համաշխարհային կատաստրոֆի առթիվ: Ահա թե ինչ է ասել նա. «Շեքսպիրը մի մեծ բան չէ: Մենք՝ գերմանացիներս ենք նրան փքել, մեծացրել: Մեր Հաուպտմանը նրանից բարձր է»:

Լսու՞մ եք, Շեքսպիր և Հաուպտման, առյուծ և կատու, արծիվ և ագռավ:

Ավելին լսեցեք:

«Տոլստոյը մի խելառ ծերուկ էր, քաղաքակրթության թշնամի, որ ամբողջ կյանքը կոչ է արել դեպի մի նեխված կյանք, առանց լուսավորության»:

Դարձյալ լսեցեք:

«Ֆրանսիացի գրողները գողեր են, որ միշտ կողոպտել են գերմանկան գրականությունը: Վիկտոր Հյուգոն կողոպտել է Շիլլերին, Անատոլի Ֆրանսը կողոպտում է ինձ (այսինքն՝ Շնիցլերին)»:

«Մետերլինգը մի սինլքոր է…»:

Եվ այլն, և այլն, և այլն:

Մարդ ապշում է այդ տեսակ մտավոր արբեցողության առջև: Մարդ ամաչում է մարդ էակի մասին, տեսնելով այդ չափ մտավոր անասնություն…

Մարդկային արյունը հեղեղել է աշխարհի կեսը: Միլիոնավոր մայրեր են ողբում իրենց զավակներին: Մարդու սրտից արյուն է հոսում՝ ամեն օր կարդալով տասնյակ հազարավոր սպանվածների և վիրավորների մասին**:** Ովքե՞ր են այդ տասնյակ հազարները. ֆրանսիացի, գերմանացի, ռուս, թե ավստրիացի՝ միևնույն է մեզ համար: Հավասար ողբալի է ահավոր մարդկային կոտորածը: Սոսկալի մըղձավանջը կարելի է տեսնել ամենքի հոգում: Մարդն անզոր է, հուսահատական ճիչեր է արձակում, չկարողանալով ինչպես վերջ տալ անօրինակ կոտորածին:

Եվ այդ ժամանակ «կուլտուրական» Գերմանիայի առաջնակարգ զավակները մարդակերության հերոսներ են դառնում: Այնինչ՝ նույն Գերմանիայից «վայրենի» համարված Ռուսիայի առաջնակարգ զավակները՝ Գորկի, Կուպրին, Արցիբաշև և այլն, և այլն, գնում են պատերազմի դաշտը ոչ թե թշնամու արյունը թափելու, այլ մարդկային վիշտը և տառապանքները գեթ մի աննշան ամոքելու համար…

Շիրվանզադե
«Մշակ», 1914թ., N202

ՀՈՒՍՈՎ ԵՆՔ

Հանցանքն արդարացնողն ավելի դատապարտելի է, քան ինքը՝ հանցավորը: Զազրելի է դահճի գործը, բայց ավելի քստմնելի է նա, ով համբուրում է դահճի արյունաշաղախ ձեռքը:

Երբ գերմանական զորքերը սկսեցին քարուքանդ անել Բելգիան, Եվրոպայի այդ ամենածաղկյալ, ամենախաղաղասեր անկյունը, երբ նրանք սկսեցին սրի և հրի անցկացնել անզոր ծերերին, անպաշտպան կանանց և նույնիսկ երեխաներին, երբ նրանք թնդանոթների բերանները ուղղեցին Ռեյմսի սրբազան տաճարի, գերմարդկային այն հրաշալիքի դեմ, երբ նրանք կրակի մատնեցին Տիցիանի ստեղծագործությունները,- համայն աշխարհը պապանձվեց:

Հայտնվեց, որ գերմանական շովինիզմ կոչված օձի թույնը ավելի զորավոր է, քան մենք կարծում ենք: Հայտնվեց, որ այդ թույնը ընդունակ է նույնիսկ առաջնակարգ հոգիների մեջ սպանել ամեն ինչ, որ մարդկային է, և վերացնել ամեն ինչ, որ անասնական է: Հայտնվեց, որ Եվրոպայի սրտում ապրող մի ազգի ամենաքաղաքակիրթ զավակներին անգամ արյան հոտը կարող է այնպես արբեցնել, որ նրանք սրբագործեն չարագուշակ այլանդակությունը:

- Անվանեցեք մեզ հոներ, հրեշներ, ինչ կամենաք, բայց մենք գոհ ենք և այնքանով, որ մեր հաղթական զորքերը կճեղքեն ձեր զորքերի շարքերը,- աղաղակում է դրամատուրգ-վիպասան Հաուպտմանը՝ մի չանվանված շովինիզմով արդարացնելով իր հայրենակիցների վայրենությունները:

Կարծես Ռեյմսի տաճարի այն սքանչելի արձանների շարքն է ֆրանս-բելգիական զորքերի շարքը: Կարծես, անշունչ մարմնավորումն է գերման ազգի ապերախտ այլանդակությունների պատճառը:

Դյուրին է երևակայել, թե ինչ է մի ազգի մասսան, եթե նրա առաջնակարգ զավակները այդչափ անասնացել են: Դյուրին է երևակայել, թե ինչ կլինի քաղաքակրթության վիճակը, եթե մի այդպիսի ազգ, հակառակ բանականության, ներկա պատերազմից հաղթող դուրս գա:

Ոչ մի գազանություն այնքան զզրելի չէ, որքան մտքի գազանությունը: Ոչ մի հանցանք այնքան քստմնելի չէ, որքան հոգեկան հանցանքը: Երբ բիրտ ուժի ներկայացուցիչ մի զորապետ, որ իր բանակով ասպարեզ է մտել սպանելու, ավերելու, այրելու նպատակով, մենք սարսափում ենք նրա արածներից, իսկ երբ մտքի և զգացումների զորապետն է թև ու թիկունք տալիս ավերողին, նրա արածը մեզ համար դառնում է ոչ սարսափելի, այլ զզվելի:

Այն արատը, որ ձգտում են իրանց հայրենիքի բարոյական վարկի վրա Հաուպտմաններն ու Շնիցլերները, ավելի խոշոր է, ավելի հավիտենական, քան Ռեյմսի տաճարը քարուքանդ անող զորապետի ձգած արատը:

Եվ մենք՝ հայերս, որ մինչև այժմ ուրիշ ասիական ազգերի հետ համարում էինք Գերմանիան մեկը մեր ուսուցիչներից, այսօր ակամայորեն ստանում ենք մի տխուր իրավունք, այն է՝ արգահատանքով նայելու մեր երեկվա ուսուցչին: Եվ հուսով ենք, որ այսուհետև մեր հայերը իրենց զավակներին կրթություն տալու համար Գերմանիա ուղարկելու մեծագույն սխալը չեն գործի:

Շիրվանզադե
«Մշակ», 1914թ., N207

ԹՈՂ ՊԱՐԶԵՆ

Եվրոպացին ընդհանրապես անկարող է արդ ուսումնասիրել ասիացու հոգեբանությունը: Համաշխարհային բարքագրական գրականության մեջ քիչ է այդ իմաստասերների թիվը, որոնց դիտողական դիրքը թափանցել է արևելցու հոգու խորքերը: Կաբինետային իմաստասերները և նույնիսկ ճանապարհորդները ահագին մեծամասնությամբ շարունակ կրկնում են իրենց նախորդների մի անգամ ասածները: Դժբախտաբար, հենց այդ կրկնություններն են, որ բարոյական մեծ ազդեցություն ունեն եվրոպական հասարակական կարծիքի վրա Արևելքի մասին:

Մի Պիեր Լոտի, որի ճանապարհորդական դիտողությունները, բացի միակողմանի լինելուց, չափազանց կասկածելի են անկաշառության տեսակետից, համարվում է հեղինակավոր արևելագետ: Եվ ահա երբ նա խոսում է թուրք ազգի չունեցած առաքինությունների մասին, մի ամբողջ ազգ իր քաղաքագետներով ու քաղաքական գործիչներով հանդերձ հավատում է նրա ասածներին: Եվ ոչ ոք չի մտածում կամ նեղություն չի կրում նրա ասածները ստուգելու:

Կան արմատական բնազդներ, որոնցից ոչ մի ժողովուրդ, ոչ մի ազգ չի կարող ազատվել, որքան ևս քաղաքակրթվի, որքան ևս լուսավորվի: Շողոքորթությունը, ստախոսությունը, կեղծավորությունը և խաբեբայությունը այն դարավոր բնազդներն են, որոնք միշտ եղել են և պիտի հավիտենական լինեն՝ անբաժան օսմանլուի բնույթից: Կըրթեցեք նրան որքան կամենաք, տվեք նրան եվրոպական քաղաքակրթության բոլոր բարիքները, թող նա լինի իր հայացքներով, իր բարք ու վարքով, իր արտաքին ու ներքին արժանավորություններով կատարյալ եվրոպացի, բայց հոգու խորքում միշտ անջնջելի են ցեղական բնազդները:

Զարմանում են, որ Թուրքիան ներկա պատերազմը հայտարարվելու օրից անորոշ և երկդիմի դեր է կատարում: Զարմանում են, որ նա չի ուզում դիմակը դեն ձգել և ցույց տալ իր քաղաքակրթության իսկական կերպարանքը Եվրոպայում: Հետաքրքրական է իմանալ, թե ե՞րբ, իր պատմության ո՞ր շրջանում են օսմանցիները եղել շիտակ և անկեղծ: Նրանք միշտ կեղծել են, միշտ ստել, միշտ խաբել աջ ու ձախ: Միակ բանը , ուր նրանք եղել են անկեղծ, դա անզեններին և անպաշտպաններին հալածելը, կեղեքելն ու կոտորելն է: Դա եղել է նրանց միակ առաքելությունը և միակ քաջությունը:

Միանգամայն ճիշտ է ասում Մեթերլինգը, թե մի ազգ արժանի է այն պետությանը, որ ունի: Այսօր սուլթան Համիդ, վաղը Ահմեդ-Ռիզա, մյուս օրը Էնվեր փաշա-դրանք բաղկացած են միևնույն խմորից և բոլորն էլ իրենց ազգի հարազատ ծնունդներն են: Եվ թուրք ազգի ոչ մի տարրը և ոչ մի բանով, ըստ էության, չի տարբերվում նրանցից: Ինչ-որ անում էր երեկ սուլթան Համիդը, այսօր անում են Էնվեր փաշաները, և ես համոզված եմ, որ վաղը կանեն նույնիսկ Սաբահ-Էդդինները, որքան ևս նրանք խրոխտան իրենց եվրոպական գաղափարներով ու ձգտումներով:

Թող եվրոպացին դեռ շարունակի հավատալ թուրքին, մենք՝ հայերս, չենք հավատում, քանի որ արդեն շատ ենք պատժվել մեր դյուրահավատության պատճառով: Մեր ներկա կասկածը մեր հակաթույնն է : Եվ որովհետև մեր ազգի ճակատագիրը կես մասով, դժբախտաբար, կապված է Թուրքիայի հետ, բնական է, որ սրա դիմակը պատռելու դժվարին գործի մի մասն էլ մեզ վրա է ընկնում: Ուստի թող այն մարդիկ, որոնք միջոց ունեն և կարող են, աշխատելը թուրքի ապականված հոգեբանությունը պարզել այնտեղ, ուր հարկավոր է պարզել:

Շիրվանզադե
«Մշակ», 1914թ., N214

ԲԱՐԻ ՃԱՆԱՊԱՐՀ

Խլեցեք մարդու հարստությունը, նա կարող է նորից ձեռք բերել կորցրածը: Խլեցեք մարդու պատիվն անգամ, նա կարող է նորից վերականգնել նրան: Բայց զրկեցեք նրան կյանքից, և ամեն ինչ վերջացած է:

Նա, ով զոհում է իր գանձը մի վեհ գործի համար, սոսկ մի բարերար է: Նա, ով վտանգի է ենթարկում իր բարոյական հարստությունը, հույս ունի նրան պաշտպանելու: Իսկ նա, ով իր կյանքն է տալիս, մարտիրոս է:

Կյանքն է ամենամեծ գանձն աշխարհի: Նա է բոլոր բարիքներից մեծագույնը, ամենից անգնահատելին, ամենից անձեռնամխելին: Եվ նա, ով չի խնայում իր կյանքը մի վեհ գործի համար, պիտի դասվի սրբերի շարքը:

Որքան խղճալի է այն զինվորը, որ փախչում է պատերազմի դաշտից, քստմնելի է այն երիտասարդը, որ համաշխարհային արհավիրքի ժամանակ կանչված լինելով իր քաղաքացիական պարտքը կատարելու՝ դիմում է հազար ու մի աններելի միջոցների-ստի, խաբեության, կեղծիքի, կաշառքի… վառոդի հոտից խուսափելու համար, նույնքան պաշտելի է նա, ով իր հոժար կամքով է վազում պատերազմի դաշտը:

Արդ, արհամարհելով պարազիտներին և երկչոտներին, հարգենք հերոսներին, եթե չունենք քաղաքացիական քաջություն նրանց առջև խոնարհվելու:

Եվ տանք նրանց այն, ինչ-որ կարող ենք և պարտավոր ենք տալ ամենը՝ նյութական աջակցություն և բարոյական խրախուսանք: Տանք և ասենք.

- Բարի ճանապարհ, ազնիվ և աներկյուղ հոգիներ: Երջանիկ երթ և հպարտ վերադարձ և ձեզ, որ գնում եք մեր բազմաչարչար մայրենի ժողովրդին սպասվող վտանգներից փրկելու համար:

Շիրվանզադե

«Մշակ», 1914 թ., N216

ՀԱՈՒՊՏՄԱՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ Ռ. ՌՈԼԱՆԻՆ

Ինչպես կհիշեն մեր ընթերցողները, մոտ օրերս «Մշակում» տպվեց ֆրանսիացի նշանավոր գրող Ռոլանի բաց նամակը՝ ուղղված գերմանացի նույնպես նշանավոր գրող Հերվարդ Հաուպտմանին: «Եթե լռեք,- իր նամակի վերջում ասում էր Ռոլանը Հաուպտմանին,- դա ցույց կտա, որ դուք համակրում և հավանում եք կամ անտարբեր եք ձեզ ղեկավարող հոների արարքներին»:

Եվ «Ջուլիակների» հեղինակ Հաուպտմանը չի լռել և ահա պատասխանում է.

«Դուք դիմել եք ինձ, պ. Ռոլան, մի բաց նամակով, որի մեջ վիշտ է լսվում պատերազմի մասին (Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի սկսած), վիշտ եվրոպական կուլտուրայի վնասների նկատմամբ և հին գեղարվեստի սրբազան կոթողների կործանման մասին: Այդ ընդհանուր վիշտը բաժանում եմ և ես: Սակայն ես չեմ կարող համաձայնել ձեզ պատասխան տալու, որը դուք մտքով արդեն վերագրել եք ինձ և որի մասին դուք սխալ ենթադրություն եք անում, թե իբր Եվրոպան սպասում է իմ պատասխանին:

Ես գիտեմ, որ ձեր երակներում գերմանական արյուն է հոսում: Ձեր գեղեցիկ «Ժան Քրիստոֆ» գիրքը մեզ մոտ ընդմիշտ պատվավոր տեղ է բռնել «Վիլհելմ Մեյստերի» և «Կանաչ Հենրիխի» շարքում: Ֆրանսիան ձեր երկրորդ հայրենիքն է, և այդ պատճառով Ձեր սիրտը ցավում և Ձեր դատելու ընդունակությունը մթագնել է: Դուք եռանդուն կերպով աշխատում էիք երկու ժողովուրդներին հաշտեցնելու: Չնայած դրան, նայեցեք, արյունահեղ կռիվը խեղաթյուրել է Ձեզ մոտ, ինչպես և շատ շատերի մոտ, մեր երկրի տեսքը, և, իհարկե, բոլոր ջանքերն ու փորձերը՝ ստիպել պարզ տեսնելու այդ՝ անհաջողության կհանդիպեն:

Պարզ է, որ այն ամենը, ինչ-որ դուք ասում եք մեր կառավարության, մեր զորքի և մեր ժողովրդի մասին, այդ ամենը ծախու և կեղծ է: Այնպես կեղծ, որ Ձեր բաց նամակը ինձ թվում է ինչ-որ սև, դատարկ տարածություն:

Պատերազմը պատերազմ է: Կարելի է ցավել պատերազմի համար, բայց մի զարմանաք այն բաները տեսնելով, որոնք անբաժան են այդ տարերային պատուհասից: Իհարկե, շատ ցավալի է, որ պայքարի մրրիկում կործանվում է անփոխարինելի Ռուբենսը, բայց արժանի հարգանքը տալով Ռուբենսին՝ ես պատկանում եմ այն մարդկանց շարքին, որոնք առավել խոր վիշտ են զգում իրենց մերձավորների գնդակահարված կրծքերը տեսնելով, և իզուր դուք, պ. Ռոլան, այնպիսի եղանակով եք խոսում, կարծեք Ձեր հայրենակից ֆրանսիացիները մեր դեմ դուրս են եկել արմավենու ճյուղերով, այն ժամանակ, երբ նրանք ունեն հսկայական թնդանոթներ, հրանոթներ և անգամ «դում-դում» գնդակներ:

Պարզ է, մեր պանծալի զորքերը Ձեզ սարսափ են ներշնչել: Նրանց կողմն է ուժի փառքը, որը անհաղթելի է իր գործի արդարությամբ: Սակայն գերմանական զինվորները ընդհանուր ոչինչ չունեն այն զզվելի և բութ հեքիաթների հետ, որ այնպես եռանդագին տարածում է Ձեր ֆրանսիական ստախոս մամուլը և որոնց ֆրանսիական և բելգիական ժողովուրդները պարտական են իրենց աղետներով: Թող մի որևէ դատարկամիտ անգլիացի մեզ «հոներ» կոչի, Դուք մեր պահեստի պանծալի զորականներին Ատտիլայի որդիներ անվանեցիք: Մեզ այնքանն էլ բավական է, որ այդ զորականները կտրում են մեր անխիղճ թշնամու շղթան: Առավել լավ կլինի, որ Դուք մեզ Ատտիլայի որդիներ անվանեք, երեք խաչ դնեք մեզ վրա և մնաք մեր սահմանի այն կողմը, քան մեր գերմանական ժողովուրդը գերեզման իջնի սենտիմենտալ տապանագրով՝ «Գյոթեի սիրելի ժառանգները»: «Հոներ» խոսքը բաց է թողնված այն մարդկանց կողմից, որոնք իրենք հոներ լինելով՝ իրենց խաբված զգացին իրենց առողջ և ինքնուրույն ժողովրդի դեմ լարած հանցավոր դավադրության մեջ և բռնկվում են

նրա համար, որ այդ ժողովուրդը սարսափելի հարված ցույց տվեց առաջն առնելու ավելի սարսափելի հարվածի: Ուժասպառության հասածները դիմում են չարախոսության:

Ես ոչինչ չեմ խոսում բելգիական ժողովրդի մասին: Գերմանական զորքի խաղաղ անցքը, որ Գերմանիայի համար կյանքի հարց է, թույլ չտվեց Բելգիայի կողմից նրա համար, որ նրա կառավարությունը զենք էր դարձել Անգլիայի և Ֆրանսիայի ձեռքին: Եվ նույն կառավարությունը, որպեսզի ամրապնդի իր խարխուլ դիրքը, նախաձեռնեց անօրինակ պարտիզանական կռիվ, և դրանով, պ. Ռոլան, չէ՞ որ Դուք էլ երաժիշտ եք, սարսափելի տոն տվեց պատերազմին: Եթե Դուք հնարավորություն ունենաք անցնել գերմանացիների համար թշնամական ստության վիթխարի պատը, կկարդաք մեր կայսերական կանցլերի գրությունը, որ սեպտեմբերի 7-ին ուղարկել է Ամերիկա, կկարդաք, այնուհետև, այն հեռագիրը, որ ինքը կայսրը սեպտեմբերի 8-ին հղել է նախագահ Վիլսոնին, և այն ժամանակ կիմանաք իրերի դրությունը, որ անհրաժեշտ է իմանալ, որպեսզի հասկանալի լինի Լուվենի աղետը»:

Շիրվանզադե
«Մշակ», 1914թ., N215

ԴՈՒՔ ԵՎՍ ՊԱՐՏԱՎՈՐ ԵՔ

Ներկայումս ֆրանսիական բանակում կան մոտ 15.000 հոգևորականներ: Վարպետ, քահանա, միսիոներ՝ մի կողմ են ձգել ֆարաջաները և գնացել պատերազմական դաշտը իրենց բարձր քաղաքացիական պարտականությունը կատարելու՝ զենքով հայրենիքի գոյությունը պաշտպանելու համար:

Դասական օրենքով հոգևոր դասն ազատ է զինվորական ծառայությունից, բայց նույն օրենքը պարտավորեցնում է գնալ կռվի դաշտը քրիստոնեական խաչը ձեռներին՝ մահամերձ հիվանդներին հաղորդություն անելու, մեռելներին թաղելու, վիրավորյալներին խնամելու և առհասարակ կատարելու իրենց կոչման սովորական պարտականությունները:

Եվ այսօր, երբ Ռուսաստանը հայրենական ահեղ պատերազմի մեջ է, ուղղափառ հասարակությունը կատարում է այն, ինչ նրանից պահանջում է օրենքն և իր կոչումը: Ռուս քահանաները գնում են պատերազմող բանակը ահագին քանակությամբ, և նրանց ներկայությունն այնտեղ մեծ արիություն է ներշնչում հայրենիքի հավատացյալ պաշտպաններին: Այդ չէ միայն, նրա բարձր հոգևորականությունը սինոդի նախաձեռնությամբ իր ծախսերով բաց է անում հիվանդանոցներ, բուժարաններ և պատերազմի դաշտն է ուղարկում սանիտարական խմբեր, և այդ բանում նյութական և բարոյական աջակցություն չեն խնայում համատարած Ռուսաստանի բոլոր հոգևորականները, սկսած ամենամեծից մինչև ամենափոքրը:

Արդ, ինձ համար՝ իբրև հայ լուսավորչականի, խիստ հետաքրքրական է իմանալ՝ արդյոք ի՞նչ է արել մինչև այսօր հայ հոգևորականությունը: Ավելին չեմ սպասում, սոսկ այն շրջանակում ուր ազատ էր և կարող էր գործել պարզ քրիստոնեական բարեգործության սահմաններում:

Գուցե ես սխալ եմ, բայց մինչև այժմ դեռ ոչինչ չեմ տեսել ու լսել:

Խուլ են հայ բազմաթիվ քահանաները, խուլ են եպիսկոպոսները ու վարդապետերը: Լուռ է նաև Էջմիածինը: Այնինչ օգնության առաջին օրինակը հայ ժողովրդին հենց Էջմիածինը պիտի տար:

Եթե մեր հոգևորականությունը կարծում է, թե մաղթանքներ կատարելով և այս ու այն տեղ հեռագրեր ուղարկելով արդեն կատարել վերջացրել է իր ամբողջ պարտականությունը, թույլ եմ տալիս ինձ ասելու, որ նա ոչ միայն սխալվում է, այլև մի որոշ մեղք է գործում իր բարձր կոչման դեմ:

Մենք խոնարհվում ենք նրա մաղթանքների և համակրական անձնյութ ցույցերի առջև, բայց ավելի կխոնարհվեինք, եթե նա ասպարեզ գար իր նյութական աջակցությամբ: Արդարանալ նյութական պակասությամբ հայ հոգևորականությունը չի կարող և չունի իրավունք: Որքան ևս նա չունևոր լինի, հասարակ արհեստավոր և պարզ բանվոր դասակարգից չքավոր չէ: Եթե մի եպիսկոպոս վախճանվելով թողնում է աշխարհին մի բավական խոշոր գումար, ինչու՞ չկարծել, որ մյուս եպիսկոպոսներն էլ կարող են ունենալ, եթե ոչ այդ չափ մի որոշ գումար: Եթե նավթային հանքերում դժոխային աշխատանքով կոպեկներ վաստակող բանվորները կարող են իրենց ամսականից մի որոշ տոկոս զոհել վիրավորյալներին, ինչու՞ նույնը չեն կարող անել մեր քահանաները:

Բայց հայ հոգևորականությունն այնքան սովորել է ստանալը, որ տալը միանգամայն մոռացել է: Նա կարծում է , որ ամեն ցավ կարելի է աղոթքներով ու մաղթանքներով բուժել:

Ոչ, հոգևոր հայրեր, կան հանգամանքներ, երբ դուք ևս սոսկ քաղաքացիներ եք: Ներկա հանգամանքում դուք ևս ունեք քաղաքացիական պարտականություն, որ պարտավոր եք կատարել:

Կատարեցեք ուրեմն:

Շիրվանզադե

«Մշակ», 1914թ., N 220

ԻՐԱՎ, ՈՐ ՆԱ ՄԵԾ ԷՐ

Կենդանի հայ գրողներից ոչ ոք այնքան լավ չի ճանաչում Պետրոս Ադամյանին և այնքան մերձ բարեկամ չէ եղել նրան, որքան ես:

Այսօր կարող էի շատ բան ասել նրա մասին, բայց թվում է ինձ, որ մեծ մարդկանց մասին ամենից սակավ պիտի խոսել այն ժամանակ, երբ նրանց մահվան այս կամ այն տարեդարձն է կատարվում:

Սովորություն է դարձել անմահների հիշատակը ամբոխային աղմուկներով վրդովել նրանց մարմնավոր մահվան «ամյակներին», իսկ ուրիշ ժամանակ մոռացության տալ նրանց: Այս սովորությունն ունի մի քանի տգեղ կողմեր: Ամենատգեղը նրանցից այն է, որ մարդիկ շատ անգամ անմահների մասին խոսելու փոխարեն խոսում են իրենց մասին: Ի՞նչ է առաջանում դրանից: Այն, որ մենք, անմահների աշխարհային կյանքի հետ ծանոթանալու և այդ ծանոթությունից մեզ համար կրթիչ խրատներ քաղելու փոխարեն, պատիվ ենք ունենում ծանոթանալու շատ անգամ փոքրությունների շատ պիտանի տպավորությունների, մտածողությունների զգացումների, երբեմն նույնիսկ ինքնակենսագրությունների հետ:

Արդ, թող ներվի ինձ, որ ես շաբլոնից հեռանալով, չեմ ուզում իմ հիշողություններն առաջ բերել և թույլ եմ տալիս ինձ Ադամյանի մասին ասել միայն մի քանի ընդհանուր խոսքեր:

Թող ինչ ուզում են ասեն, ես Հայի ազգային պատմության մեջ, սկսած նույնիսկ մեր այնքան գովված և իրավ գովաբանության արժանի միջնադարյան բանաստեղծներից, չեմ ճանաչում մի անուն, որ արժանի լիներ Ադամյանի անվան կողքին դրվելու իբրև գեղարվեստական հավասարություն:

Դժվար և միանգամայն անհնարին է գաղափար տալ Ադամյան արվեստագետի մասին այն մարդկանց, որոնք նրան տեսել են իրենց պատանի ու մանուկ հասակներում:

Խոսում են նկարիչ Այվազովսկի մասին, իբրև Ադամյանի հավասար հանճարի:

Թվում է ինձ, որ եթե այսօր մի հրաշքով երևան գար մի հայ նկարիչ, որ կարողանար կտավի վրա վերստեղծել Ադամյանի գեղարվեստական պատկերը, նա կդառնար ավելի, քան մի Այվազովսկի...

Այդքան մեծ էր Ադամյանն իբրև արվեստագետ:

Դրաման համարվում է արվեստների թագուհի, որ իր հավասարը չունի: Շեքսպիրը այդ թագուհու ամենաառաջին իշխանն է: Արդ, ինչ անուն տալ այն արվեստագետին, որ մեծագույն իշխանի գերագույն զենքերից մեկն է եղել: Ի՞նչ անուն, բացի «մեծ» անունից:

Ադամյան- Օթելլոն հավասար չէր Սալվինի Օթելոյին և Ադամյան-Լիրը վար էր Ռոսսի-Լիրից: Բայց Ադամյան- Համլետը անհամեմատ բարձր էր, քան Սալվինի-Համլետը, Ռոսսի-Համլետը, Մունե-Սյուլի-Համլետը:

Հիշում եմ այսպիսի մի դեպք: Օդեսսայի քաղաքային մեծ թատրոնում էի: Խաղում էր Մունե-Սյուլին-Համլետ: Քովս նստած էր հայտնի դերասան և անտրպրենեոր Ֆորկատտին, այդ գեղարվեստապաշտ իտալացին, որին Կովկասը շատ բաներ է պարտ: Այն տեսարանում, երբ Համլետն արտասանում էր իր նշանավոր «Լինել, թե չլինելը», Ֆորկատտին դարձավ ինձ:

- Դուք հիշու՞մ եք Ադամյանին այս տեսարանում:
- Շատ լավ:
- Համեմատու՞մ եք:
- Այո:
- Ի՞նչ կասեք:

Ահամեստ չթվալու համար պատասխանեցի:

- Թվում է ինձ, որ Ադամյանը նույնպես լավ էր այդ տեսարանում:

Ֆորկատտին բորբոքվեց:

- Եվ Դուք այդ դերասանին այդ դերում կարող եք համեմատել անզուգական Ադամյան-Համլետի հետ: Նա միակ Համլետն էր, միակը,- գոչեց նա ոգևորվելով:

Այսպես էր օտարի կարծիքը Ադամյանի մասին: Եվ որպիսի՜ օտարի: Մի մարդու, որ տեսել էր աշխարհի բոլոր հռչակավոր շեքսպիրիստներին:

Իրավ, որ Ադամյանը մեծ էր:

Շիրվանզադե
«Մշակ», 1916թ., № 123

Ե՞ՐԲ ՊԻՏԻ ԼԻՆԻ ՎԵՐՋ

Որքան հրիչ և հակակրելի է ազգային ինքնապաշտումը կամ ամբարտավանությունը, նույնքան և ավելի դատապարտելի է ազգային ինքնաապտակումը կամ անպատվասիրությունը:

Որքան ծաղրելի և եղկելի է նա, որ ինքն իր վրա սիրահարված՝ չի ճանաչում իրենից դուրս և իրենից հեռու գեղեցկություն, նույնքան ավելի ողորմելի է նա, որ ամեն օր հայելու մեջ թքում է իր երեսին և ինքն իրանից զզվանքով փախչում:

Գերմանացին համակրելի դարձավ ամենուրեք այն օրից, երբ սկսեց իր ազգը համարել տիեզերքի առանցք և մարդկության զարդ: Այն օրից, երբ նա սկսեց աշխարհի բոլոր վայրերում պարծենալ իր «բարձր քաղաքակրթությամբ», որի իսկական արժանիքն այսօր պարզ է մեզ համար:

Հրեայի ամենահակակրելի, ամենահրիչ հատկությունը նրա ազգային ինքնաապտակումն է, ինքնաթքումը և ինքնաոչնչացումը: Չկա մի ուրիշ ազգ աշխարհի երեսին, որ այնքան ամաչի իր ծագումից, այնքան ինքնաբերաբար, երբեմն նույնիսկ առանց որևէ պատճառի ստորացնի իր ազգը, որքան հրեան: Բավական է ասել, որ հրեա ժողովրդի մասին ամենակեղտոտ, ամենազազրելի անեկդոտներ հնարողներն իրենք հրեաներն են և նրանք են ամենատաղանդավոր պատմողներն այդ անեկդոտների:

Սակայն մարդկային մտքի, բարոյական էության, ճաշակի և նրբազգացողության համար որքան ատելի է այն հրեան, որ թքում է իր ազգի երեսին, նույնքան զազրելի է այն գերմանացին, որ ազգային գոռոզությունից արբեցած և ամբարտավանության փխրուն բարձունքից է նայում ուրիշ ազգերին:

Կյանքի առաջին գեղեցկությունը և ազգերի ամենահիրապուրիչ զարդը չափի զգացումն է: Չի կարող լինել սիրելի և հարգելի այն ազգը, որ զուրկ է այդ զգացումից:

Գովելի է, հարկավ, երբ մի ազգ գիտե զգալ իր թերությունները և քննադատել ու մտրակել նրանց անխնա: Գովելի է նույնիսկ, երբ մի ազգ ճանաչում է իր արժանավորությունները և գնահատում նրանք: Բայց, երբ քննադատության, նաև գնահատման մեջ անցնում է չափի զգացումը, այն առաջին հերթին դառնում է բարոյական ինքնասպանություն, և երկրորդը՝ բարոյական պոռնիկություն, բարոյականություններ, որ արժեն իրենք իրենց էությանը:

Այս տողերը գրելու առիթը տվեց ինձ այն հախուռն հարաբերությունները մեր ազգային բարոյական քիչ թե շատ ունեցած գանձերի դեմ, որ վերջերս հայ մամուլի էջերում կատարվում են մինչև այժմ չտեսնված թափով:

Խնդիր է հարուցվում հայ դպրոցի մասին, և ահա տեղից վեր կացող առաջին վարժապետը, որ հազիվ հազ սովորել է մանկավարժության այբ ու բենը, սկսում է քարկոծել ամեն ինչ, որ եղել է իրենից առաջ և կատարվում է իրենից դուրս:

Խոսվում է հայ թատրոնի մասին. ով ասես, որ չի հարձակվում նրա վրա և ոտնատակ չի անում ու ոչնչացնում նրա 2000-ամյա թեև ոչ շքեղ, ոչ հարուստ, բայց մաքուր ու հպարտ գոյությունը: Դեռ մի քանի ամիս սրանից առաջ կարդացի մի շարք անճաշակ ու առարկելի հոդվածներ, որոնց «հեղինակը» կոպիտ գավազանի մի հարվածով ջարդեց ու ոչնչացրեց և՛ Սունդուկյանին, և՛ Պեշիկթաշլյանին, և՛ Ադամյանին, և՛ Հրաչյային, և՛ Սիրանույշին, և՛ Աբելյանին ու ամենքին: Նրա համար չկա ոչ հայ բեմ, ոչ հայ դերասան, ոչ նույնիսկ հայ հասարակություն:

Իսկ հայ գրականությու՞նը: Ես չեմ ճանաչում հայ կյանքում մի տարր, որ այնքան հալածված ու քարկոծված լինի, որքան խեղճ հայ գրականությունը. մի գործիչ, որ այնքան պարսավված լինի, որքան հայ գրողը: Այժմ բանն այնտեղ է հասել, որ մարդիկ իրենց անմաքուր

ձեռքերով շոշափում են գրողի անձնական, նույնիսկ ընտանեկան կյանքը: Ապականությունը ավելի հեռուն գնալու տեղ չունի: Մնում է բռնել հայ գրողի օձիքից փողոցում ու խեղդել նրան: Ճշմարիտ, եթե մի քաղաքակիրթ օտարազգի կարդա այն բոլորը, ինչ-որ գրվում է հայերեն՝ հայ գրականության և հայ գրողի մասին, կարող է կարծել, որ գրականությունը հայի աչքին հավասար է ավազակության և գրողը՝ ավազակի:

Ե՞րբ պիտի լինի վերջ այդ վակխանալիայի, ես չգիտեմ: Երբ պիտի զգան մարդիկ, որ իրենք օտարների առջև թքում են իրենց երեսին և լիզում օտարների կոշիկները, ոտնատակ անելով իրենց իսկ մարդկային արժանապատվությունը, չգիտեմ: Գիտեմ միայն, որ այսպիսի պայմաններում մի ազգ չի կարող ոչ կրթվել, ոչ քաղաքակրթվել:

Շիրվանզադե

«Մշակ», 1916թ., № 170

ՊԱՐՏԱՎՈՐ ԵՆՔ ՕԳՆԵԼ

Կյանքի նույնիսկ ներկա ծանր պայմաններում, երբ գրեթե համայն մարդկությունն է հեծեծում, կան մասնավոր դեպքեր, որոնք համայնականի չափ ուշագրավ են և հուզիչ:

Երեկ պատահաբար ձեռքս անցավ մի նամակ, որի ընթերցումը մինչև արցունք հուզեց ինձ, և ես վճռեցի ներկա տողերով դիմել իմ ընթերցողների խղճի օգնությանը, հուսալով, որ իմ կոչն անհետևանք չի մնա:

Գրում է այդ նամակը Պետրոգրադից մի հայ ուսանողուհի իր հորը, որ զուրկ է կյանքի երկու ամենակարևոր բարիքներից՝ առողջությունից և նյութական ապահովությունից:

Ես պատիվ ունեմ անձամբ ճանաչելու այդ օրիորդին: Դա մեկն է այն վերին աստիճանի ընդունակ, ծայրահեղ աշխատասեր, օրինակելի, եռանդուն և համեստ ու հեզ հայուհիներից, որոնք միայն մի թերություն ունեն՝ հիվանդոտ սեր դեպի քաղաքակրթությունը: Սեր, որ անդիմադրելի զորությամբ քաշում տանում է նրանց խոշոր մտավոր կենտրոններ: Այնտեղ նրանք, արհամարհելով գրեթե չքավոր գոյության մանր պայմանները և անսովոր կլիմայի դաժանությունը, կրելով հազար ու մի դառնություններ, ֆիզիկական աշխատանքով ճգնում են հագեցնել իրենց ծարավը ուսման և գիտությունների:

Եվ հագեցնում են:

Բայց հաճախ նրանք, ընկճվելով այդ դառնություններից, կանգ են առնում կես ճամփին հոգնած, ուժասպառ, և չար ճակատագիրը կտրում է նրանց ծաղիկ կյանքը ճիշտ այն պահին, երբ նրանք նոր պիտի սկսեն ապրել:

Դրանք մի տեսակ կամավոր նահատակներ են, որոնք բարձր հոգեկան կորովով և սրտի վեհ ձգտումներով բարձրացնում են հայ

կնոջ բարոյական վարկը և մտավոր հռչակը մեր և օտարների աչքում:

Հետևաբար, ինչպես չխոնարհվել այդ համեստ հերոսուհիների առջև և ինչպես չօգնել նրանց հարկավոր դեպքերում, երբ կարող ենք օգնել:

Այն օրիորդը, որի նամակը ձեռքիս տակն է, մի ուսանողուհի է, որ արդեն անցել է կանանց բարձրագույն կուրսերը և այժմ պետք է վերջին քննությունները տա, ավարտի և վերադառնա հայրենիք՝ լույս տարածելու խավար շրջաններում:

Նա գրում է, ի միջի այլոց.

«Հայր, պետք է այս վերջին քննությունների համար վճարել 272 ռուբլի: Եթե դու չունես հնարավորություն այդ գումարն ուղարկելու, գրիր, այն ժամանակ ես կթողնեմ ամեն ինչ և…

Դու գիտես, հայր, որ ես մահից չեմ վախենում, միայն ափսոս է երիտասարդությունս: Ես ապրել եմ առանց մի վայրկյան ուրախության… Միակ բանը, ուր ունեցել եմ հաջողություն, գիտություններ հասկանալ և ըմբռնելն է, և այժմ անիծյալ դրամն այդ բանից էլ զրկում է ինձ: Երևի Աստված առհասարակ չի ուզում ինձ ուրախություն տալ, իսկ քանի՞ գրոշ արժե կյանքն առանց ուրախության…»:

Եվ այս հուսահատությունն ընդամենը մի ինչ-որ 272 ռուբլու պատճառով: Եվ հոսահատված է ոչ միայն օրիորդը, այլև նրա հայրը, որովհետև ոչինչ չունի:

Գուցե ես չգրեի այս տողերը, եթե խնդիրը վերաբերվեր մի սոսկ ուսանողուհու: Բայց ներկա դեպքում հուսահատության մեջ մեր առջև կանգնած է մի էակ, որի հայրը ունի երեսուն ու հինգ տարվա հասարակական և գիտական ծառայություն հայ ազգի համար:

Ես ներողություն եմ խնդրում պարոն Սեղրակ Թառայանից, որ ստիպված եմ նրա անունը հրապարակ բերել:

Թվում է ինձ, որ այդ անունը բավական է, որպեսզի հասարակությունն զգա, թե որքան կարևոր և պարտավորական է անհապաղ և անհետաձգելի օգնությունը մի օրիորդի, որի հայրը երկարամյա ան-

կաշառ, անկեղծ և անշահասեր գործունեությունից հետո միայն մի վարձ է ստացել՝ հիվանդություն: Նաև հուսահատություն՝ իր երեք զավակների նյութականը մատակարարելու անզորություն:

Դիմում եմ մասնավորապես Թառայանի անձնական բարեկամներին, հարգողներին և ծանոթներին, որոնց թիվը այնքան մեծ է:

«Մշակի» խմբագրությունը կընդունի նվերները և կհասցնի ըստ պատկանելույն:

Միայն հարկավոր է շտապել:

Շիրվանզադե
«Մշակ», 1916թ., № 213

ՄԱՐԻԵՏՏԱ ՇԱՀԻՆՅԱՆ

Շատ ցավում եմ, որ տկարությունս թույլ չտվեց ինձ մինչև վերջ լսելու երիտասարդ բանաստեղծուհու և փիլիսոփա քննադատուհու գեղեցիկ և իմաստալի դասախոսությունը հայ հեքիաթների մասին, որ կայացավ ամսի 5-ին Թիֆլիսի կոնսերվատորիայի դահլիճում: Բայց այնքանն ևս, որ հաճույք ունեցա լսելու, բավական եղավ համոզվելու համար, որ տիկին Մարիետտա Շահինյանը որքան տաղանդավոր է իբրև գեղարվեստագետ ու քննադատ, նույնքան հետաքրքրական ու գրավիչ է որպես դասախոս: Եվ պետք է ասել, որ Հայ ազգագրական ընկերությունը, որի հրավերով է եկել շնորհալի տիկինը Թիֆլիս, չէր կարող ավելի հաջող ընտրություն անել հայ հեքիաթների մասին ռուս լեզվով դասախոսելու համար:

Բավական չէ ասել, որ տիկին Շահինյանը, լինելով ազգով հայ, ռուս լեզվին տիրապետում է այնչափ իշխանաբար, որչափ գուցե շատ սակավաթիվ ռուս հրապարակախոսներ կամ դասախոսներ և գուցե ոչ մի հայ՝ ռուս գրական և գիտական ասպարեզում: Լինելով բանաստեղծ, նա գիտե իր դասախոսությունը դարձնել մի կատարյալ բանաստեղծական երկ: Այնչափ հետաքրքրական, որ ունկնդիրը մի վայրկյան անգամ չի զգում ձանձրույթ և լսել է բանախոսին լարված ուշադրությամբ:

Հեքիաթն ինքնըստինքյան բանաստեղծություն է, և ո՞վ կարող է ավելի խորն ըմբռնել և գեղեցիկ արտահայտել նրա գեղարվեստական ուժը, քան բանաստեղծը, բայց Շահինյանը ոչ միայն բանաստեղծ է, այլև գիտնական: Եվ դա է, որ կրկնակի հետաքրքրական ու հաճելի է դարձնում նրա դասախոսությունը: Նրա լեզուն հարուստ, ոճը՝ պատկերավոր, գեղեցիկ, հակիրճ ու կտրուկ, որպես մի զորեղ

դրամայի ոճ, և որ ամենագլխավորն է, ոչ շաբլոնային, այլ զարմանալի ինքնատիպ և ինքնուրույն:

Ես այս ասում եմ ոչ միայն նրա դասախոսության, այլև նրա հրապարակախոսական, քննադատական և մանավանդ բանաստեղծական երկերի մասին:

Հարուստ են տիկ. Շահինյանի նաև գիտական պաշարը և գրականական ու գեղարվեստական էրուդիցիան: Եվ ես, որ կարելվույն չափ հետևում եմ այդ բացառիկ հայուհու գրական գործունեությանը, յուրաքանչյուր անգամ նրա գրվածքները կարդալիս մտածում եմ, թե որքան լավ կլիներ, եթե հայ գրականությունն ունենար մի քանի այսպիսի ուժեր:

Սակայն ինձ չի զայրացնում, որ տիկին Մարետտա Շահինյանը ռուս բանաստեղծուհի է, ռուս հրապարակախոս և ռուս քննադատ: Այն պարզ պատճառով, որ այս տեսակ մի քնքուշ ծաղիկ տակավին վաղաժամ է հայ անդաստանի համար: Մեր կոշտ ու կոպիտ միջավայրը շատ արագ կթառամեցներ նրան և կտաներ դեպի հուսահատություն...

Շիրվանզադե
«Մշակ», 1917թ., № 191

ԹԱՏՐՈՆԻ ՄԱՍԻՆ

Ձմեռայի թատրոնական սեզոնը վերջանալու վրա է: Մի քանի ներկայացումներ ևս, և Թիֆլիսի հայ դերասանական խումբը կհանգստանա... անգործությունից: Ասում եմ անգործություն, որովհետև չի կարելի գործ համարել շաբաթական մի հատիկ ներկայացումը: Բայց ինձ հաղորդեցին մի ուրախալի լուր. վերջապես Դրամատիկական Ընկերության այժմյան երկչոտ խորհուրդը քաջություն է ունեցել Արտիստական ընկերության թատրոնը Մեծ պասի և գարնան համար վարձել շաբաթական երկու ներկայացումների համար:

Թեև ազգային թատրոն ստեղծելու համար կոչված մի ընկերության դափնիներին այս հանգամանքը մի մեծ բան չի ավելացնում, այնուամենայնիվ այդքանն էլ մի բան է, ուստի ես ավելորդ չեմ համարում մի քանի դիտողություններ անել: Ոչ թատրոնի ընդհանուր կացության, այլ առաջիկա սեզոնի վերաբերմամբ:

Նախ և առաջ այն խումբը, որով հասարակությունը կերակրվում է, այժմ թե որակի և թե քանակի կողմից միանգամայն անկատար է: Այնքան անկատար, որ մինչև այսօր ոչ մի ներկայացում չունեցավ բավարար ամբողջություն: Ավելին կասեմ, իբրև հայ թատրոնի վաղեմի ծանոթ մի անձ, չեմ հիշում Թիֆլիսում ավելի թույլ խումբ, նույնիսկ 20-30 տարի սրանից առաջ, երբ մենք չունեինք մեր դերասան ու դերասանուհիների այժմյան քանակության քառորդն անգամ: Ես չեմ մեղադրում Դրամատիկական Ընկերության այժմյան խորհրդին, գուցե նա, հակառակ իր ցանկության, չի կարողացել անել այնքան, որքան պարտավոր էր անել: Ես շեշտում եմ միայն փաստը և պնդում, որ ցնորք է կարծել, թե այդ տեսակ թերի խմբերով կարելի է հայ թատրոնի ապագան ապահովել:

Խոսքս ամբողջության մասին է և ոչ առանձին ուժերի: Խմբի մեջ կային մի քանի նոր ուժեր, որոնք ապագա են խոստանում, բայց բացակա էին փորձված և հմուտ դերասան ու դերասանուհիներից շատերը, առանց որոնց հայ բեմի հաջողությունը անհնարելի է:

Արդ, եթե Դրամատիկ Ընկերության խորհուրդն իսկապես ուզում է գործ կատարել և ոչ բազմահամբեր հայ հասարակության համբերությունը շահագործել, եթե նա կարող է մի փոքր բարձրանալ հայ թատրոնի այժմյան հաճախորդների միջին ճաշակից, անպայման պարտավոր է խումբը լրացնել: Թատրոնի հաջողությունը լի հասույթների մեջ չպիտի փնտրել: Նյութականը կարևոր է, չեմ վիճում, բայց գեղարվեստականն է, որ կարող է ամրացնել թատրոնի առողջ և հարատև գոյությունը: Շատ ուրախալի է, որ հայ հասարակության կիսակիրթ խավարն էլ սկսել է հաճախել թատրոն, բայց ոչ խորհուրդը և ոչ մանավանդ խումբը չպիտի հրճվեն դրանով, նիրհեն իրենց էժանագին դափնիների վրա: Ծափահարություններ կան, որոնց արժեքը գեղարվեստի տեսակետից հաշվի չպիտի առնվի:

Այս մեկ:

Երկրորդ, պետք է ավելի խնամքով կազմել առաջիկա ռեպերտուար: Գովելի է, որ Դրամատիկ ընկերությունը, վերջապես, եկել է այն եզրակացության, որ առանց ինքնուրույն ռեպերտուար՝ թատրոնի գոյությունը ապարդյուն է: Գովելի է, որ խորհուրդն այս ձմեռ այնքան ինքնուրույն պիեսներ բեմ դուրս բերեց, բայց դա առաջին քայլն է, պետք է շարունակել նույն ուղղությամբ և ավելի կրճատել թարգմանական ռեպերտուար: Այս է պահանջում հայ թատրոնի բարգավաճումը, եթե հարկավ, կամենում ենք, որ վերջ ի վերջո նա դառնա կատարյալ ազգային:

Ես գիտեմ, որ Դրամատիկ Ընկերության այժմյան խորհուրդն ու ռեժիսորը սկզբունքով ջերմ կողմնակից են ինքնուրույն ռեպերտուար, և դա պատիվ է բերում նրանց: Բայց կա մի վատ սովորություն, որ աններելի է. դա բենեֆիսացիան, դերասան ու դերասանուհիներին պիեսներ հնարելու իրավունք չտալն է: Մի սովորություն,

որ սկզբից ևեթ հայ բեմի գլխավոր ախտերից մեկն է այժմ էլ: Այս ձմեռ մեր բենեֆիցիաներ դերասան ու դերասանուհիների պիեսների ընտրությունը այնքան անհաջող էր, որքան ես չեմ հիշում ոչ մի տարի: Չպիտի թույլ տալ, որ այս անհաջողությունը կրկնվի: Իսկ դրա համար ոչ մի դերասանի կամ դերասանուհու չպիտի տալ բենեֆիս:

Առհասարակ բենեֆիս ասված բանն իմ կարծիքով անբարոյականություն է: Տվեք դերասան ու դերասանուհիներին վարձ որքան կամենաք առատորեն, բայց մի սովորեցնեք նրանց մուրացկանության, վասնզի բենեֆիսն ուրիշ ոչինչ է, եթե ոչ մուրացկանություն: Մի գարշելի սովորություն, որ հայ բեմը ընդունակել է ռուս գավառական խմբերից:

Առայժմ այսքանը:

Շիրվանզադե
«Մշակ», 1918թ., № 35

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԱՌԱՔԵԼՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Սիրում էր վիճաբանել, թեև կուսակցական ոգով, բայց միշտ գաղափարական հողի վրա: Համառ ու կամակոր չէր իր կարծիքների մեջ, որովհետև կարճամիտներն են միայն իրենց համարում անսխալական: Վիճում էր կատաղի կրքով, բայց այնքան խելոք էր, որ գիտեր անմիջապես հաշտվել հակառակորդի հետ, երբ զգում էր իր սխալը: Երբեք անձնական ակնարկներով չէր վշտացնում իր հակառակորդներին, և երբ իր անձնավորությունն էին վիրավորում - պատասխանը դարձյալ նույն լայն, մեղմ ու հեգնական ժպիտն էր:

Այսպես եմ ես ճանաչել Համբարձում Առաքելյանին, իբրև անհատի, ընկերական և մասնավոր կյանքում: Իսկ ճանաչել եմ ես նրան շատ վաղուց: Եվ կարծում եմ, թե չեմ սխալվել, քանի որ իմ ու նրա մեջ եղած ընդհարումների ամենակատաղի միջոցներին իսկ չեմ զգացել դեպի նա ատելություն:

Տարբեր էր նա մի փոքր իբրև գրչի մարդ: Ճշմարտասեր էր նա անսահման, բայց վերին աստիճանի սուբյեկտիվ, արդարամիտ, բայց ինքնամոռացության չափ ծայրահեղ, միշտ գաղափարական, բայց և միշտ անհավասարակշիռ: Նրա հասարակական ատելությունը դեպի հասարակական ախտավորները չափ չուներ: Նրա թույնն անսպառ էր, երբ հարկավոր էր խայթել: Նա չգիտեր խնայել, երբ կար անհրաժեշտություն կործանելու: Անհաշտ էր իբրև մարտնչող, դաժան որպես դատավոր:

Այս տեսակետից Համբարձում Առաքելյանը Գրիգոր Արծրունու իսկական աշակերտն էր և միակ հաջորդը, նրա չափ կրակոտ, նրա չափ տաղանդավոր:

Այո, հենց այդ ծայրահեղության, այդ կրքոտության և այդ դաժանության մեջ էին կայանում Համբարձում Առաքելյանի և բարձր

արժանավորությունը, և փոքրիկ թերությունը իբրև հրապարակախոսի: Դա էր նրան դարձրել այնքան վտանգավոր, այնքան ատելի և, միևնույն ժամանակ, այնքան ահռելի իր բազմաթիվ հակառակորդների աչքում: Հակառակորդների, որոնք, սակայն, չէին կարողանում դիմանալ նրա սոսկալի խարազանի հարվածներին, ուստի և ամեն մի բանակռիվ վերջացնում էին ապիկարների սովորական զենքով-ծաղրով, հայհոյանքներով ու զրպարտություններով: Մի զենք, որ երբեք չէր փրկում նրանց կողմնակի և օբյեկտիվ դիտողի արհամարհանքից և միայն ծառայում էր աներկյուղ հրապարակախոսի ժողովրդականությանը, օր օրի վրա բարձրացնելով նրան իր հակառակորդների գլխից վեր:

Բայց մի բան, որ առանձնապես զարմացնում էր ինձ Համբարձում Առաքելյանի մեջ՝ նրա ֆենոմենալ եռանդն էր, նրա գերբնական աշխատասիրությունը: Այդ մարդը չգիտեր հոգնել ոչ ֆիզիկապես և ոչ մանավանդ մտավորապես: Կարծես նրա ներվերը պողպատից էին, ուղեղը՝ բրոնզից:

Անշուշտ, գաղափարն էր, որ նրան ներշնչում էր այդքան ուժ, եռանդ և ոգևորություն: Իր ապաբախտ ազգի երջանկության գաղափարը, որի համար նա աշխատեց ամբողջ կես դար և որի իրագործումը, սակայն, բախտ չունեցավ տեսնելու:

Շիրվանզադե
«Մշակ», 1918թ., № 136

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք 3
Շիրվանզադեի թատերախոսությունները 4
Նամակներ մոսկվայից 8
Շիրվանզադեն մեծ եղեռնի մասին 10
Հոդվածներ 15
Տիտաններ և պիգմեյներ 17
Հուսով ենք 19
Թող պարզեն 21
Բարի ճանապարհ 23
Հաուպտմանի պատասխանը Ռ. Ռոլանին 25
Դուք ևս պարտավոր եք 28
Իրավ, որ նա մեծ էր 30
Ե՞րբ պիտի լինի վերջ 33
Պարտավոր ենք օգնել 36
Մարիետտա Շահինյան 39
Թատրոնի մասին 41
Համբարձում Առաքելյանի հիշատակին 44

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԼԵՆԴՐՈՒՇ ԱԼՈՅԱՆ

Ալեքսանդր Շիրվանզադեն՝ «Մշակի» աշխատակից

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Հրատ. խմբագրումը՝ Գ. Գրիգորյանի

Ստորագրված է տպագրության՝ 20.12.2016:
Չափսը՝ 60x84 1/16: Տպ. մամուլը՝ 3:
Տպաքանակը՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.ysu.am

ՏՊԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2015